

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԱԹՈՌԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ ԱԹՈՌԻ ԳԱՀԱԿԱԼ ԽՈՐԵՆ Ա-Ի ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱՉԳԵՆ ԱՌԱՋԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

Խոր վշտով Ձերդ Սրբության կիսաղորդենք սրտի կաթվածի հետևանքով անակնկալ վախճանումը Մեծի Տանն Կիլիկիո սիրելի կաթողիկոս Խորեն Ա-ի, Անթիլիասի իր բնակարանին մեջ:

Թաղման կարգը պիտի կատարվի Անթիլիասի Մայր տաճարին մեջ, երեքշաբթի, 15 փետրվարին, առավոտյան ժամը 11-ին:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱԹՈՌԱԿԻՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Անթիլիաս,
10 փետրվարի 1983 թ.

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Բ-ԻՆ

Անթիլիաս—Լիբանան

Վշտալի սրտով մասնակցում ենք Ձեր սուգին և աղոթում, որ բարին Աստված քաղցրությամբ ընդունի հոգնաբեկ հոգին Նորին Սրբություն Խորեն կաթողիկոսի և արժանացնի նրան երկնային արքայության: «Խորհուրդ մարմնոյ մահ է և խորհուրդ հոգւոյն կեանք և խաղաղութիւն»:

Լույս և խունկ ի Տեր հանգուցյալ Խորեն Հայրապետի հիշատակին:

Երկնավոր Հայրը մեր բարեգութ թող մխիթարի Ձեզ և Աթոռիդ միաբանությունը Սուրբ Հոգով և անսասան պահպանի պատմական Տունը Հայոց Կիլիկիո:

Կիրակի, հանդիսավոր պատարագ և հոգեհանգիստ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում Մեր նախագահությամբ:

Այս տխուր առիթով ընդունեցեք Մեր եղբայրական սիրո հավաստին:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
11 փետրվարի 1983 թ.

ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Բ-ԻՆ

Անթիլիաս—Լիբանան

Հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության ընդունեցեք մեր խորին ցավակցությունները Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Խորեն Ա-ի անժամանակ վախճանման առթիվ:

Թող բարին Աստված ողորմությամբ ընդունի նրա հոգին լուսեղեն խորաններուն մեջ, և Սուրբ Հոգին մխիթարե Ձերդ Սրբությունը և Սուրբ Աթոռիդ ողջ միաբանությունը:

ՆԵՐՍԵՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՁԱՊԱԼՅԱՆ
ԴԻՎԱՆԱՊԵՏ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
12 փետրվարի 1983 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Կաթողիկոսարան հայոց, Անթիլիաս—Լիբանան

Ամենայն Հայոց Հայրապետի բարձր նախագահությամբ, այսօր, կիրակի, Սուրբ Էջմիածնի Մայր տաճարում, խուռներամ բազմությամբ հանդիսավոր սուրբ պատարագ մատուցվեց և հոգեհանգստյան պաշտոն կատարվեց հոգվո հանգստյան և լուսավորության համար նորոգ ի Տեր հանգուցյալ Տ. Տ. Խորեն Ա Տանն Կիլիկիո կաթողիկոսի:

Վեհափառ Վազգեն Ա կաթողիկոսը հուզիչ խոսքով ոգեկոչեց հիշատակը հանգուցյալ Հայրապետի և աղոթեց, որ Տերը անշարժ և ծաղկյալ պահի Կիլիկյան Հայոց Աթոռը: Բոլորս հայցում ենք Ձերդ Սրբության և Աթոռիդ միաբանության Սուրբ Հոգու մխիթարություն. ամեն:

ՀՈՒՍԻԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՆԹՈՒՐՅԱՆ
ԼՈՒՍԱՐԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ

Ս. Էջմիածին,
13 փետրվարի 1983 թ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին—Երևան

Խորապես ապդված ենք Ձեր վշտակցության ջերմ զգացումներուն համար երանաշնորհ Խորեն Առաջին կաթողիկոսի վախճանման և թաղման տխուր

առիթով: Ձեր աղոթքը ու խոսքը Սուրբ Էջմիածնի Մայր տաճարին մեջ հոգեկան մխիթարության աղբյուր եղավ մեկի, մեր միաբանության, Ազգային Կեդրոնական Վարչության և մեր համայն հավատացյալ հայ ժողովրդյան համար:

Երուսաղեմի միաբանութենեն պատրիարքական փոխանորդ Կյուրեղ եպիսկոպոսի մասնակցությունը օծման և թաղման արարողությանց և իր խոսքը հանուն Սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի և Երուսաղեմի Պատրիարքության, ջերմորեն գնահատվեցան մեր բոլորի կողմե: Կաղոթենք, որ Աստված հարցն մերոց Ձերդ Սրբության պարգևե երկար կյանք կատարյալ ողջությամբ և երջանիկ գահակալությամբ ի բարգավաճումն Սուրբ Էջմիածնի և համայն Հայ Եկեղեցվո:

Թող բարին Աստված երկնային խաղաղության մեջ հանգչեցնե սիրելի Խորեն Վեհափառի հոգին և անսասան ու ծաղկյալ պահե Հայ Եկեղեցին ի սփյուռս աշխարհի:

Եղբայրական սիրով ի Քրիստոս՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ

Անթիլիաս,
17 փետրվարի 1933 թ.